Իմ վըրայ ղամ մի՛ բռներ, քո սէրն ինձ խելք ե՞րբ է թողել:

Է.

Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր, գիտացէ՛ք, եար եմ կորուսել:
Ա՛յ քարեր, ա՛յ թըփեր, աճապ ի ձեզ չէ՞ եկել.
Ա՛յ քարէ կարմընջնի, ի ձեզ չէ՞ անցել.
Ձիս ի քուն թողել ելեր գընացեր:

Ը.

Դէմ առաւօտուն լուսուն ես ի ձեր երդիքըն եկել,
Գլխակս ալ ի վար դընրել, լօք մընրափըն զիս է տարել,
Սունն ալ ի գերանն ասել՝ Սիրոյ տէրն երդիքն է եկել.
Քանի իմ մարն զիս բերել, ես փատէ խամազ չէյ տեսել.
Փատն ալ ի մորին բուսել, խանմզութիւն ո՞ւստից է ուսել:

Թ.

Ա՛մ, երեսդ է՞ր է դեղնել ’ւ երեսիդ գունըն գընացեր.
Գէմ քո եարըն չէ մեռեր կամ օտար երկիր գընացեր.
Թէ ես լամ նա հաղ ունիմ, որ գիտեմ ի՞նչ եմ կորուսել.
Կորել է հոգուս հոգին անհոգեկ ես եմ մընացել:

Ժ.

Երեսդ է լուսին նըման ու զիլֆերդ ի ղատիր գիշեր.
Քընքեր բեհեշտի խնծոր ’ի ծովուն տըւած քեզ աչեր.
Ուներ կեռումեռ ունիս, թուխ աչեր, թարթիչդ է նետեր.
Բերանդ է լալէֆըշան, մէջն ի լիք է մարգըրիտներ:

ԺԱ.

Բազայ մի որդան փոկով կու որսար զորսըն ցորեկով.
Կաքաւ մի հազար փետրով էր նստել՝ աչուին ճոթերով.
Կաքաւն ի բազան ասաց՝ Մի’ որսար զորսըն ցորեկով.
Ես չեմ ցորեկուան որսիկ, զիս որսա՛ մութըն գիշերով:

ԺԲ.

Իմ կուլ ու մուրտ ու ճիհան, ’ւ ի ծոցդ է բուսեր ըռահան.
Երկու ծամ ղեղձան ունիս, ի դնչիդ մէջըն կայ նըշան.
Ձուներդ ալ իլղար արել ու կ’երթաս ի Մսրայ թալան.
Շատ ու շատ գերի բերես, շատ խօճա ու շատ պազիրկան.
Գերիս ալ ի հետ բերիր ձըգեցիր ի ծով ի զնտան: